



Ա Մ Ո Ա Գ Ւ

ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՖ. — ՇՐՋԱՆԻ Դ.

1871

ԴԵԿԱՏԵՄԵՐ 31

Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

ՍՍՈՅ ԽՆԴԻԲ

Դ բաւական ժամանակաց հետէ Ասոյ կաթողիկոսական խնդիրն յայտնի է բազմաց թէ՝ որպիսի կնճռալից կերպարանը ընդունած է, և կը յուզի և վերի վայր կը խառնաշփոթէ մոքերը:

«Քաջ յայտնի էին ի վաղուց խորիմաց հեռատես և բանտգետ ազգայնոց այն ամեն հնարք և ջանքեր՝ որ ընդ վերարկուած օգտի և միութեան Եզդիս՝ գաղանածածուկ կգործէին ի խորչ խորչ Ա. Պօլսոյ, և այլ և ոյլ ձեւեր և որոշումներ կըտային խնդրոյն, որ— ինչպիս մի ուշեմե հեռանկատ ազդային ասաց Ա. Պօլսոյ Եզդ. Երեսի. Ժողովոյ մէջ՝ թէ վտանդ կայ քուետուփի մօտ, բոյց մէք կասեմք՝ թէ—

Նշ Հյուանդ արդէն հասեալ իսյ և դրանու Հայաստանէաց Եկեղեց-ոյ և Եղիշէ Թու-
նէան, և բացայացա կընտեսնուին յապա-
գային ծագելքը կոիւք և խռովութիւնք,
պառակտմունք և բաժանմունք միութեան
Մայրենի Ա. Եկեղեցւոյս, զոր ահա այս
օրերը Պօլսոյ լրագիրք գումարեցին գուշա-
կեալ խարդաւանութեանց պարզուիլը ի
կեդրոնատեղին Տաճկաստանի ի Պատրի-
արդարանն Հայոց :

Ո՞վ չգիտեր՝ թէ կրօնական բարձր և վը-
սեմինդիրք և եկեղեցական կանոնք և նոր
բարեկարգութիւնք կը պատկանին Շնդ-
հանրական Հայրապետի և նորին միայն նա-
խագահութեամբ գումարեալ Ճողովոյն ի-
րաւասութեանց: Ի՞այց ցաւօք սրտի կ'տես-
նուի՝ զի Ա. Պօլսոյ Գյեր. Պատրիարքն և
Շնդհ. ժողով անդը քան զորամազրու-
թիւնս (Տաճկաստանաբնակ Հայոց Ազգ.)
Ասհմանադրութեան և քան զիրաւասու-
թիւնսն՝ Ասոյ կաթուղիկոսութեան առ-
թիւ այնպիսի խնդիրներ յուղեցին և կը-
նկրաին այժմ վճռել, որ երբէք ներելի
չեն նոցա՝ և փոխանակ բարեկարգու-
թեանց՝ բազմադիմի անկարգութիւնք պի-
տի ծնանին ի վեսա միութեան և օգտի
Ազգիս և սահմանադրութեանց սրբոյ Ե-
կեղեցւոյս և նուիրական իրաւանց Մայր
Աթուոյս:

Ասոյ — ինչպէս նաև Ազթամարայ —
ծնունդ զեղծմանց ժամանակին անվաւեր
իշխանութեան ենթարկեալ ազգայինք
մեր և սիրելքը ոչ ի հաւասա և ոչ ի
կրօնական արարողութիւնս երբէք ամե-
նեւին տարբերութիւն և բաժանմունք
չունեին և չունին, այլ ամենեքին հարա-
զա և հաւատարիմ որդիք են անարատ

Հարսին Վրիսատոսի Ա. Եկեղեցւոյ Հա-
յաստանեայց, և ուր ուրեք Հայք կան՝
որոց և հարցուի, նոցա պատասխանիք են
միշտ ճանաչել մի միայն Գլուխ և Հով-
ուապետ Առաքելական Եկեղեցւոյ Հա-
յաստանեայց, որոյ (այսինքն՝ ամենայն
Հայոց Կաթուղիկոսութեան) գահանիստ
կայարան է ի դարաւոր ժամանակաց աստ
ի Մայր Աթուու ի Ա. Եջմիածին, որում
ոմանք այժմիկ միայն այլ իմն կերպարանք
տալ կ'ձգնին: Ուրեմն ի՞նչ մի մեծ շար-
ժառիթ կայ արգեօք զբեթէ ազգիս ընդ-
հանրութեան ի դարուց հետէ և ի սրբա-
զան նախնեաց անվաւեր վճռած տեղեաց
առաւել մեծ նշանակութիւն տալ և օրի-
նաւոր Կաթուղիկոսական Աթուու անօւա-
նել և սրբոյ Աթուոյս հետ ի մասին յա-
րաբերութեանց տարօրինակ խնդիրներ
բանալ, առանց կանխաւ զիտութեան և
հաւանութեան Ա. Կաթուղիկոսի ամե-
նայն Հայոց, և ի՞նչ կընշանակեն Ասոյ և
Ազթամարայ յարաբերութիւնք ընդ Ա. ար-
շութեան Պօլսոյ: Մի՞թէ բազմաց յայտ-
նի չեն ի վաղուց եղեալ յարաբերութիւնք
նոցին ընդ Պատրիարքաց Պօլսոյ՝ որ լոկ
քաղաքական էին: Կասկած կընդունիմք,
մի՛ զուցէ եկեղեցական բարեկարգութեան
յարաբերութիւն կամին հաստատել ո-
մանք Տաճկաստանաբնակ մերազնեայք,
որ առանց բացէ ի բաց և պարզապէս ա-
պստամբելոյ յԱրարատեան Մայր Աթու-
ուոյս՝ չկարեն դաշնակցել ընդ նոսա. ար-
գեօք այսպէս կամին դաւազիրք խարել
և խարդաւանել պարզամիտները և բարե-
պաշա ժողովուրդը: Խսկ Կթէ հաւաստեաւ
իղձ ունին այն անուանեալ կաթուղիկո-
սունքը ի կարգ և ի սահման հրաւիրել,

և նոցա հովուութեան ներքիւ դտնուող ողորմելի մերազգիքն ուսմամբք և մտաւուրական և բարոյական զարգացմամբք երջանկացնել, և միանդամայն պաշտօնական կերպիւ բերել և միացնել Մայր Եթոռոյս Հովուապետութեան հետ, դոքա ի վաղուց հետէ սկսուած են Պօլսոյ ուշիմ եկեղեցականաց և աշխարհականաց կողմանէ, նաև աւելորդ դատուած է երրեմն յումանց Եղթամարինն՝ և առժամանակ մի ևս վերցուած, բայց ինչ ինչ հանգամանօք ժամանակին ի ձեռն կաշառակուլ անձանց վերստին հաստատուած, իսկ զիմիսն բարեկարգելով՝ ուղել նորին յարաբերութիւնը ընդ Մայր Եթոռոյս սրբոյ Խջմիածնի և ոչ ընդ Պօլսոյ Եզրարցութեան, և առժամանակ մի թողուլ զանուն կաթուղիկոսութեան Ասոյ՝ մինչեւ ժամանակն ինքնին անօրինէ զարժան և զօգուան ընդհանրութեան Եզրիս: Եւ այս մաքով էր՝ որ Պօլսոյ Պատրիարքարանը երրեմն բաւական աշխատեցաւ Եջապահութեան ցեղը վերցնելոյ համար, և ի նոյն ցեղին երկու երիտասարդ եկեղեցական բերելով ի Ա. Պօլսո յուսումնարան դրաւ, որոց մին Պուկաս անուն ապա յիւրայնոցն ընտրուեցաւ կաթուղիկոս Ամրակոս կոչմամբ — որ խոստմազգիր տուած է ի Պատրիարքարանն՝ ջնջել ընտրութեանց մեջ շարունակեալ ցեղական սովորութիւնը, — որում յաջորդեց ինքնակոչն Ամրակոս: Երդեօք բազմաց յայտնի չէ, որ այժմեան Վեհ. Կաթուղիկոս՝ երրեմն ի Պատրիարքութեան իւրում ի Ա. Պօլսո՝ որքան աշխատեցաւ այն անկարգութիւնը ազգիս մջին վերցնելոյ աղադաւ, քանի որ Խօզանեանց

բռնութիւնք և աղղեցութիւնք թուլացած էին և հետզհետէ կանհետանային ինչպէս և եղան, և Ի. Պուռն Օսմանեան կառավարութեան կարողացաւ իւր աղղեցութիւն և իշխանութիւն կատարելապէս ի գործ ածելի լերինս Տօրոսի, — և օրինաւոր յարաբերութիւն հաստատելոյ համար քանիցս ի խորհուրդ մտաւ ի Տէրհանդուցեալ Մատթէոս Կաթուղիկոսի հետ մինչ ի Ա. Պօլսո էր՝ ինչ ինչ յօդուածներ առաջարկելով, բայց Լուսահոգոյն ի Ախս և յԵղթամար կաթուղիկոսական տիտղոս ընդգունելու միայն առիթեղաւ գործոյն անկատար մնալոյն. և միթէ Կորին Արբութիւն Վեհ. Կաթուղիկոս ինքն իսկ չէր՝ յորժամ ընտրեցաւ ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց և եկն ի Պրուսայէ ի Պօլսո, և ի ներկայացուցանելն Պերապատիւ Պատրիարքին Ա. Պօլսոյ Պօլսո սրբազան Երք եպիսկոպոսի Ասոյ և Եղթամարայ ինքնակոչ կաթուղիկոսաց խողիրները, (Կորին Արբութիւն) առաջարկեց յառաջագոյն յարաբերութեանց խողրոյն ձեռն արկանել, որպէս զի ինքնին դիւրութեամբ լուծուին այն ինքնակոչաց Ենդիրը: Եւ արդարեյաջողեցաւ մի Յանձնաժողով կաղմել յեկեղեցականաց Պօլսոյ, որ վեց յօդուածովք իւր որոշմունք ներկայացոց Վեհափառ Հայրապետի, և նա յանձնեց Ա. Պատրիարքին ի գործ գնել: Բայց ողիսէ որպիսի մտածութեամբք գործոյն ընթացք տալ զբացաւ Պատրիարքարանն, և Կորին Արբութիւն նկատելով դարձուածքները՝ որ արդելառիթ են լինում գործոյն յաջութեան, Ճանապարհորդեց դէպ ի Մայր Եթոռոս, և դարձեալ անկատար մնաց

ինդիրն։ Խակի 1867 ամի Կոստանդնուպոլսոյ Բնդհանուր ժողովը Խառն մասնաժողով կազմեց, որ ինն յօդուածովք որոշումներ առաջարկեց առ Բնդհ։ Ճողովն Ասոյ և Եղթամարայ բարեկարգութեանց համար ի մէկն դեկտեմբերի տարւոյն, — որոյ պատճէնը կայ աստ ի դիւան Վեհափառ Հայրապետի, — բայց նա ևս Բնդհ։ Ճողովոյ կողմանէ անդործադրելի մնաց՝ ինչպէս կերեի՝ Արժապետեան Գեր. Կերսէս Եպիսկոպոսի նոյն առաջարկութեանց ծրագրին ստորև զրած անպատեհ զիտողութեան համար, որ Հայոց Ազգի և Եկեղեցւոյ կարի վնասակար լինելը քաջ հեռատեսելով Ահ։ Կաթոլիկոսն՝ նախ Կոնդակ առաքեց ի Պօլիս, որ տնօրէնութեամբ Ա. Պօլոս Պատրիարքի ընթերցան յեկեղեցիս Պօլսոյ, և ապա խիստ անհրաժեշտ դատեցաւ մի յատուկ փոխանորդ յզելոր Գեր. Աարդիս սրբազն Երբեալիսկոպոս Գալայեան գնաց, որպէսզի խորհելով Արբազան Պատրիարքին հետ՝ օգնէ գործոյն, զի վնասակար և վտանգաբեր մի որոշում չտրուի Ասոյ և Եղթամարայ ինդրոց։ սակայն ըստ դժբաղդութեան Եղզիս՝ կամդիտմամբ և կամ անդիտութեամբ տարօրինակ կերպարանք տուրին Կաթուղիկոսական Փոխանորդին և զայն առաքողի բարեմիտ նպատակաց, և ումանք զանազն խարէական ձեւրով կամեցան բարեպաշտ ժողովուրդը դայթակղեցնել, և Պօլսոյ Պատրիարքի փոփոխութեան խովութեամբը և կոռուվք զբաղեցան ել։ Այլ ի վերայ այսր ամենայնի՝ սաքաջայտ է ամենից, որ մինչեւ այն ժամանակներ ոչ մի Հայու մտքէ անցած չէր՝ թէ Աիս և Եղթամար կաթուղիկոսա-

կան օրինաւոր Եթոռներ են, և նոյնպէս ոչ մի Հայու բերնեն լսուած չէր թէ աղդըն երեք կաթուղիկոսական Եթոռներ ունի, և ոչ ոք համարձակեցաւ Յունաց Սնտիոքայ՝ Եղէքսանդրիոյ և այլ Առաքելական յաջորդութեանց օրինաւոր Եթոռուց խիստ անպատշաճագոյն կերպիւ նմանեցնել Աիսն և Եղթամարն. այլ բարեմտաց նպատակն էր միմիայն ժամանակաց բռնութիւններէն գոյացած հակառակաթոռներուն օրինաւոր կարգ և սահման որոշելներիցիս յարմար, և միացնել Հայաստանեայց Մայր Եթոռոյ հետ, կատարեալ օրինաւորութիւնը թողով իւրում ժամանակին. որով միանգամայն նոցաիդն էր Ասոյ և Եղթամարայ վիճակները գտնուած ժողովրդեան դրութիւնը բարեոքել և աղատելի կրօնափոխութեանց վտանգից, որ ստէպ կը պատահէին ի տգիտութենէ և յանհոգութենէ իւրոց եկեղեցականաց։ Յիրաւի՛ ոչ ոք երեք յանդգնեցաւ ի Հայոց մինչեւ ցարդ ասել՝ թէ ազգը երեք օրինաւոր կաթուղիկոսական Եթոռու ունի, նոցա խիզճը չէր ներել ամենեւին Հայոց ազգի միութիւնը անգիտութեամբ յերիս բաժանել և ժառանգել ապագայ սերունդի վայը, և Հարց սրբոց անէծքն ու նզովքը։ Աակայն ումանց այժմեան տարօրինակ և օտարազրդիու ձայներ արդարե կը զարմացնեն ամեն ողջամիտ Հայոց մաքերը, և Հայաստանի ամեն հարազատ և հաւատարիմ որդւոց սրտերումէջ խիստ հաւանական կարծիքներ կը յղանան՝ թէ անշուշտայն խնդիրները յուղողաց մտաց մէջ նպատակ ունին դաւ գործել և վնասել Եղզիս ընդհանրութեան, և կամ անհեռատեսութեամբ դոյզնինչ անձ-

նական օգտի և պատուոյ բաղձանօք՝ Ազգիս և Եկեղեցւոյս մեծամեծ օգուաները ունակոխել, և միանգամայն ողորմելի և տառապեալ աղջն ի գուբս բաղմազան թշուառութեանց և բաժանմանց գլորել:

Ահա այս ամենը քաջ նկատելով՝ Եռորին Ա. Օծութիւն Կաթողիկոս ամենայն Հայոց և նախատեսելով զապագայն՝ զգուշութեան համար էր՝ զի երբ նոր Պատարիարք նստաւ ի Ա. Պոլս Գեր. Ակրտիչ Ա. Եպիսկոպոսն Խրիմեան՝ Կոնդակ գրեց փութով, և հայրական սիրով զգուշացոյց զնա խոհեմութեամբ շարժիլ Ասոյ և Եղիթամարայ խնդրոց մասին, զի մի՛ վտանգեսցի միութիւն Հայաստանեաց Եկեղեցւոյ: Բայց տեսէք Եղիս դժբաղութիւնը, որ Հայրապետական Կոնդակը փոխանակ ի բեմս Եկեղեցեաց ի լուր ժողովրդեան ընթեանը, տեղւոյն ազգ, ժողովոյ մէջ կարդալն անգամ զացան և ծածկեցին, և ոչ կամեցան գալի լոյսն, զի մի՛ յանդիմանեցին դործք նոցա, և ոչ այսչափ միայն, այլ թիւր ու սխալ մեխութիւններ ևս տուողներ եղան Կոնդակին մտաց, և սկսան ունիք սուտեր տարածել բարեմիտ ժողովրդեան մէջ՝ որպէս թէ՝ Ա. Կաթողիկոս գրած լինէր Ասեցւոց և Եղիթամարցւոց համար թէ՝ Այս պուտ Ձեւելոց Աստիւ ըստ Ձեւելու է-շետանց, որ բնաւին սուտ է, և կամ մի նոր բան խօսած լինէր հակառակ գրելով, բայց սակայն պէտք էր դիտել՝ զի ոչ այժմեան Ա. Եհ. Կաթողիկոսն յինքենէ, այլ ի դարուց հետէ Եկեղեցական Ճողովներ և Ա. Հարք և Հայրապետք Հայաստանեաց Եկեղեցւոյ հանդերձ համայն հարազատ ժողովրդովք հակառակ ճանաւած են դլիս և դլիս Կ. Եղիթամար, ուստի և

Վ. Եհ. Կաթողիկոս մեր իրրե հաւատարիմաւանդապահ նախնեաց սրբոց Եկեղեցական վճիռը պէտք էր յարդել, մինչեւ իւր նախագահութեամբ կրկին ընդհանուր Եկեղեցական Ճողով կազմուի և որոշուի նոցա համար ինչ որ արժան և անհրաժեշտ կը լինի: Խսկ Եթէ այն սակաւաթիւքն ի նպատակն խարդաւանութիւն չունէին՝ էր վասն ի խաւարի կողործին և պահելով Կոնդակը միայն նորա իմաստը ըստ քմաց և ըստ հաճոյս կը տարածայնէին: Եթէ միմիայն Եղիսն օգուտն էր նոցա բուն նպատակ, էր վասն կը ծածկէին Եղիս Հայրապետէ, մի՞թէ՝ Եռորին Ա. Օծութիւն նուազ քան զինքեանս կ'սիրէր և կ'սիրէ զիզգ և զիշկեղեցի:

Երբեմն մեր արժանայիշատակ նախնիք՝ հեռատեսութեամբ ըստ պահանջման հարկին տիրող այլւայլ հզօր պետութեանց քաղաքական հանգամանաց նկատմամբ՝ մահաւանդ սպառնալից և ազգավասն փոթորկացն տռաջքը առնլոյ համար՝ զիջումն ըրած են՝ յաւէտ երկուց չարեաց փոքրագոյնը ընտրելով, նաև մի քանի փառամոլ եպիսկոպոսաց և շահակը իշխանաց կրից զոհ չտալոյ համար միամիտ ժողովուրդը՝ խոհեմութեամբ վարուած են Ասոյ և Եղիթամարայ վիճակաց և զործոց հետ, զի մի՛ ի պատճառս անհնազանդից և շահամոլ ապստամբելոց անմեղ ժողովուրդը առաւել ևս կեղեքեսցի և տաղնապեսցի ի ձեռս բռնաւոր Տէրէպէյից Խօզանեանց և Քիւրտ Պէյից. միայն և միմիայն այսպիսի մտօք էր, որ մեր Հայրապետներէն ումանք այնպիսի դառն ժամանակաց և անիշխանութեան մէջ դաշնակցել անգամ հաճեցան ընդ հակաթուակալս,

զե մի պառակաեալ փեռեկախցի հօտն Քըրիստոսի և բաժին բաժին ի կորուսա մատնեսցի:

Երդ ցաւալի միանդամյն ողբալի է, զե այնպիսի գառն ժամանակներում եթէ մեր նախնիք ամենոյն բանութեանց և հալածանաց տոկալով քաջ ախոյեաներ հանդիսացան ընդդէմ ներքին և արտաքին թշնամեաց Եկեղեցւոյ և Եզրի, և միշտ պաշտպանեցին ազգը և կրօնը, և ծանուցին միմիայն զՄայր Աթոռս Արարատեան՝ օրինաւոր յաջորդութիւն Ա. Առաքելոցն Խարդէի և Բարդուղիմեայ և Առաքելասարաս Հօր մերոյ սրբոյն Գրիգորի, զիարդ ապա այսպիսի լուսաւորեալ դարուս և մամլոց աղատ հրատարակութեանց և դիւրին յարաբերութեանց ժամանակիս մէջ, Պօլսոյ Գեր, Պատրիարք և ունակի մեծապատիւ Ենդամոց Երեսփ, և Կաղաքական ժողովոց անդրքան զտրամադրութիւնս Եզր. Աահմանաղրութեան և քան զերաւասութիւնսն եկեղեցական ծանր խնդիրներ յուղելով լուծել կը տքնին, որ հետզետէ վտանգներ կսպառնան իրաւանց Մայր Աթոռոյս, և միութեան Եզրիս և Ա. Եկեղեցւոյ Հայաստանեաց: Եթէ բարեմտութեամբ հարկ անհրաժեշտ կզգային իներկայիս նոցա դրութիւնքը բարեղորել և օրինաւորապէս յարաբերութիւն հաստատել ընդ Մայր Աթոռոյս, ի՞նչպէս կարելի էր առանց կանխագոյն դիտութեան և հաւանութեան Բնդհ. Կաթուղիկոսի խորհել միակողմանի և գործել որ նորին ձեռնահասութեան և իրաւասութեան միայն է վերապահեալ տնօրինել զարժանն՝ և կամ ըստ ծան-

րութեան խնդրոյն՝ հրաւիրել յամենայն վիճակաց Հայոց Եպիսկոպոսունս, Ա անահարս, Ա արդապետու, պատգամաւոր Երեսփոխանս ևլն. ևլն. գալ ժողովել ի մի ընդիւրով նախագահութեամբ, և համախումբ խորհրդակցութեամբ որոշել և վճառել համաձայն եկեղեցական կանոնաց և ըստ պահանջման օգտի Եկեղեցւոյ և լրութեան Եզրիս:

Ուրեմն ըստ ինքեան ապօրինի կ'համարվե Պօլսոյ Բնդհ. ժողովոյն Սսոյ խնդրոյն խորերը մտնել, և անվաւեր տուած որոշմունքն յայնմ մասին, նոյնպէս աններելի կ'համարվի Մայր Աթոռոյս ուխտեալ և երդուեալ միաբան եպիսկոպոսաց՝ առանց կանխագոյն հաճութեան Բնդհանրական Հայրապետի՝ ի խնդիրս նոցայանձնապատան միջամտել, և կամ ընդունել զպաշտօն Կաթուղիկոսութեան Սսոյ և Եզրամարայ՝ մեղանձելով ընդդէմ ուխտից և երդմանց իւրեանց *):

(*) Յանցելում մին ի լրագրաց Պօլսոյ գրածէր թէ այս ինչ եպիսկոպոսն Սսոյ ուխտին դէմ չէ մեղանչած իւր վիճակէն դուրս պաշտօն վարելով ևլն: Կը ցաւիմք զի բազումք յերիտասարդաց Եզրիս տակաւին չզիտեն թէ ի Սիս և յԱղթամար ձեռնաղրեալ եպիսկոպոսունք որպիսի և իցէ ուխտ չունին, և որո՞ւ դէմ պիտի ուխտէին, և ի՞նչ բանի, նոցա ուխտը . . . : Իսկ ի վաղուց անտի եպիսկոպոսունք Մայր Աթոռոյս ընդ այլ ուխտ վերաբերեալ կրօնի կ'ուխտեն և կ'երդնուն նաև հաւատարիմ և հարազատ մնալ Մայր Աթոռոյս և Գահակալացն, և հակառակ շարժողքըն ուխտաղրուժք են և անկանին ընդ եկեղեցական դատաստանաւ.

Եյս առթիւ կարեոր կ'համարիմք
վեհ. Աաթողիկոսի առ Գերապատիւ
Պատրիարքն ի. Պօլացի 11-ն ամսոյս ուղ-
ղած հեռագրին և առ Գեր. Մկրտիչ Սբք
Եպիսկոպոս Գերմանիկեցի ուղեալ Առն-
դակի պատճէնները հազորդել մեր սիրելի
Ազգայնոց ի զիտութիւն:

(ՊԱՏՏԱԿԱՐԱ ՀԵՌԱԳՐԻՒ)

Ի ԱԿԱԴԵՄԻԿՆԵՐԸ

Ի ԽԱՎԵՐ

ԳԵՂԻ. 11:

Առ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ Կ. ՊՈՒՏՈՑ:

Ճողովն կոստանդնուպօլսոյ ընդ Զերով նախա-
զահութեամբ անդր քան զիւր Սահմանադրութիւն
և զիրաւասութիւնն յուղէ և լուծէ զեկեղեցական
փափուկ խնդիրս, որպիսի է Ասոյ և Աղթամարայն.
և որ ցաւոյին է Սրբազնութիւն Զեր ընդ քողով
մերս փոխանորդութեան՝ ընդդէմ նուիրական ա-
ւանդութեանց սրբոց Հարց և իրաւանց Մայր Ա-
թուոյս յօժորէ քործէլ յանուն Ար՝ առանց Ար քէ-
րութեան, և շայուղէ ինտէր և շայ Սահմանադրու-
թիւն յանձնադրութեան հետիւնքէլ յեւու որինէ, ՈՐ ՄԻ
ՄԻԱՅՆ ԱՆԿ է ԸՆԴՀԱՆՈՒՐ ՁՈՂՈՎՈՅ ՀԱՅ ԵԿԵ-
ՂԵՑԱԿԱՆ ՕՐԻՆԻ ԳՈՒՄԱՐԵԼՈՅ ԸՆԴ ՆԱԽԱԳԱ-
ՀՈՒԹԵԱՄԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:
ՈՒՍՏԻ ՆՈՒՏՐՈԿԱՆ ԿԱՆՈՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ-
ՄԵՔ ՈՇ ԿՈՐԵՄՔ ՕՐԻՆԱԿՈՐ ՃԱՆՈԶԵԼ ԶԱՅ-
ՊԻՍ ՈՐՈՇՈՒՄ, և առ ի զառաջն առնուլ ազգա-
վաս հետեանաց յապագային, որտ առեւ ԶԵԼ
ՀԵՐԵՆՈՒՄ է ՀԵՆԵՐ է ՀԵՐ ՀԵՐ ՍԵՐԵ:

ԽԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՒ ԿԱԹՈՒՂԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գ Է Ա Ր Գ

(ԴԱԴԴ. ՊԱՏՏԱԿԱՐԱ ՀԵՌԱԳՐԻՒ)

CONSTANTINOPLE. GOUNGABOU.

AU PATRIARCHE ARMÉNIEN DE CONSTANTINOPLE.

L'assemblée de Constantinople sous Votre présidence excite et résoud des questions délicates ecclésiastiques telles que de Sis et d'Agthamar au delà de sa constitution et ses droits. Et il est bien triste que Votre Eminence sous le voile de notre vicariat se plait agir EN NOTRE NOM SANS NOTRE CONNAISSANCE ET EN SE CONFIANT AUTORISER UNE NOUVELLE LÉGISLATION CONTRE LES TRADITIONS SACRÉES DES SAINTS PÈRES ET LES DROITS DU PREMIER SIÉGE, CE QUI NE CONVIENT QU'A L'ASSEMBLÉE GÉNÉRALE CONVOQUÉE D'APRÈS LA LOI ECCLÉSIASTIQUE SOUS LA PRÉSIDENCE DU CATHOLICOS DE TOUS LES ARMÉNIENS.

DONC LES LOIS SACRÉES DE NOTRE ÉGLISE ET NOUS NE POUVONS NULLEMENT RECONNAITRE COMME LÉGITIME UNE PAREILLE DÉCISION, et pour prévenir les conséquences nuisibles à la nation dans l'avenir nous Vous avertissons de prendre garde à Vous écarter du chemin des Saints Pères.

PATRIARCHE SUPRÈME ET CATHOLICOS
DE TOUS LES ARMÉNIENS
GUEVORK IV.